ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 01

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

խորհրդի նիստի

ք. Աշտարակ **30. 04. 2024թ. ժամը 15^{00}**

Մասնակցում էին՝

Ս. Մովսիսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետ
Հ. Գույյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Մ. Հովհաննիսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ. Գևորգյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Ա. Գրիգորյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական
Ռ. Թադևոսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական
Վ. Հարությունյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական
Մ. Դատումյանը	ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական
Ա. Մարկոսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական

Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Մարզի ջրօգտագործողների ընկերությունների տնօրեններ

Մարզի համայնքների ղեկավարներ, տեղակալներ

Լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Մարզի համայնքների 2024թ. 1-ին եռամսյակի սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների վերաբերյալ:
2. 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի կազմման, հաստատման գործընթացների վերաբերյալ:
3. Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2022-2023թթ. սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների վերաբերյալ:
4. Մարզում 2024թ. իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ:
5. Մարզի բնակավայրերի մուտքի և ելքի ցուցանակների վերաբերյալ:
6. Պետական և այլ կազմակերպությունների միջոցով իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքի ուսումնասիրությունների վերաբերյալ:
7. Մարզի համայնքներում 2023թ. ամենամյա չօգտագործված արծակուրդների վերաբերյալ:
8. Տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային ծառայողների 2024թ. կայանալիք վերապատրաստման դասընթացների կազմակերպման վերաբերյալ:
9. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին:

10. ՀՀ Արագածոտնի մարզում էներգաարդյունավետությանը և էներգետիկ ազատականացմանն ուղղված «Արագածոտն-1» արևային այլընտրանքային ֆոտովոլտային կայանի հիմնման ծրագիր:
11. Մարզում 2024թ. գարնանային գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի վերաբերյալ:
12. Համայնքների կողմից 2025թ-ի համար՝ սուբվենցիայի ծրագրային հայտերի և տեխ. բնութագրերի ներկայացման ընթացքի վերաբերյալ:
13. Այլ հարցեր

Լսեցին՝

1. Մարզի համայնքների 2024թ. 1-ին եռամսյակի սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան/:*

/Ցուցանիշները կցվում են/:

Ն. Գալստյանը տեղեկացրեց, որ սեփական եկամուտների հավաքագրումը 2024 թվականի առաջին եռամսյակում իրականացվել է 21,8%-ով՝ Աշտարակ՝ 21,8%, Շամիրամ՝ 137%, Ապարան՝ 19,9%, Ալագյազ՝ 24,2%, Մեծաձոր՝ 7,6%, Արևուտ՝ 16,6%, Թալին՝ 23,7%, Ծաղկահովիտ՝ 12,7%: Նշվեց, որ հավաքագրման ցուցանիշները նախորդ տարվա 1-ին եռամսյակի համեմատությամբ աճել են:

Մարզպետ Սերգեյ Մովսիսյանը առաջարկեց համայնքների ղեկավարներին պատշաճ հավաքագրումը կազմակերպելու համար ամենօրյա աշխատանքներ տանել, իսկ հավաքագրումը շարունակել նույն մեխանիզմով՝ ապահովելով հավաքագրման եռամսյակային պլանավորված ցուցանիշները:

Մարզպետը հանձնարարեց մարզպետի տեղակալ Մ. Հովհաննիսյանին համակարգել այս ուղղությամբ տարվող աշխատանքները:

2. 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի կազմման, հաստատման գործընթացների վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան/:*

Ներկայացվեց համայնքների միջնաժամկետ ծախսային ծրագրերի կազմման, հաստատման գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ ՀՀ կառավարության կողմից սահմանված է ժամկետ և մինչև հունիս ամիսը ծրագրերը պետք է ներկայացվեն մարզպետի աշխատակազմ, որպեսզի վերջնական շտկումներից հետո ներկայացվեն ՀՀ կառավարություն:

Մարզպետ Ս. Մովսիսյանը համայնքի ղեկավարներին հիշեցրեց, որ միջնաժամկետ ծախսային ծրագրերի կազմման, հաստատման գործընթացներում մարզպետի աշխատակազմը պատրաստ է գործուն և մեթոդական աջակցություն ցուցաբերել:

3. Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2022-2023թթ. սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների վերաբերյալ */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ 2022 թվականին հաստատվել են Արագածոտնի մարզի 8 համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 19 սուբվենցիոն ծրագրեր՝ ընդհանուր 4 017 898 801 ՀՀ դրամ նախնական արժեքով: 19 սուբվենցիոն ծրագրերից ավարտվել են 16-ը: Սուբվենցիոն 2 ծրագրով աշխատանքները ընթացքի մեջ են,

իսկ 1 ծրագրի իրականացման համար հայտարարվել է կապալառուի մրցույթ և այժմ գտնվում է պայմանագրի կնքնման փուլում:

Ընթացքի մեջ են գտնվում Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 4 «Հասմիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների ծրագիրը, Ապարան համայնքի Արագած և Շենավան բնակավայրերում նոր մանկապարտեզների կառուցում ծրագիրը, Արագածավան համայնքի Արագածավան և Արտենի բնակավայրերի միջդաշտային ոռոգման համակարգի հիմնանորոգման աշխատանքները:

Տեղեկատվություն ներկայացվեց նաև 2023 թվականի սուբվենցիոն ծրագրի ընթացքի վերաբերյալ ըստ ուղղությունների: 2023թ. ՀՀ Արագածոտնի մարզում ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել թվով 23 սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթներ: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել 21 ծրագիր՝ ընդհանուր՝ 7 430 350 338 դրամ արժեքով: Այս պահի դրությամբ ավարտված է 15 ծրագիր, 3-ը ընթացքի մեջ է, մրցութային փուլում է 1 ծրագիր, փորձաքնության փուլում՝ 1 ծրագիր: 2023 թվականին 15 սուբվենցիոն ծրագրերի համար պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման չափը կազմել է 1 908 111 100 դրամ:

Մարզպետի կողմից անդրադարձ եղավ Արտաշավանի նորակառույց մանկապարտեզի և Աշտարակ քաղաքի թիվ 4 «Հասմիկ» մանկապարտեզի գործունեությանը: Մարզպետը առաջարկեց հետևողական լինել այդ ուղղությամբ տարվող աշխատանքների նկատմամբ:

4. Մարզում 2024թ. իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ հաստատվել է մարզի 6 համայնքներից ներկայացված 33 սուբվենցիոն ծրագրային հայտ՝ 12 208 736 420 դրամ ընդհանուր նախնական արժեքով՝ Աշտարակ – 16 ծրագիր, Թալին- 6 ծրագիր, Ապարան- 4 ծրագիր, Ծաղկահովիտ- 2 ծրագիր, Ալագյազ-4 ծրագիր, Արևուտ – 1 ծրագիր: Սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացվել է մարզի 6 համայնքների կողմից ներկայացված 23 սուբվենցիայի ամբողջական փաթեթ՝ ընդհանուր 13 506 334 710 դրամ արժեքով, որից պետական բյուջեի համաֆինանսավորման մասնաբաժինը կազմում է 6 623 825 246, համայնքի մասնաբաժինը 6 736 486 766, իսկ այլ ներդրողինը 146 022 698 ՀՀ դրամ: Ներկայացված փաթեթներից միջգերատեսչական հանձնաժողովի կողմից դեռևս որևէ ծրագիր չի հաստատվել:

Մարզպետ Ս. Մովսիսյանը հանձնարարեց սերտորեն աշխատել համայնքների հետ, մեթոդական աջակցություն ցուցաբերել, որպեսզի համայնքները կարողանան ներկայացնել սուբվենցիոն ծրագրերի ճշգրիտ փաթեթներ՝ հաշվի առնելով իրենց ֆինանսական հնարավորությունները, որպեսզի միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հնարավորինս շատ ծրագրեր հաստատվեն:

5. Մարզի բնակավայրերի մուտքի և ելքի ցուցանակների վերաբերյալ */ զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ ՀՀ Արագածոտնի մարզի մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող բնակավայրերի ցուցանակների պատշաճ տեսքն ապահովելու նպատակով՝ կապալառու ընկերությունների կողմից իրականացվել են մարզի 52 բնակավայրերի 78 ցուցանակների թարմացում կամ փոխարինում:

Մարզպետը հանձնարարեց մարզպետի տեղակալ Միլադա Հովհաննիսյանին, որպեսզի ուշադրության կենտրոնում պահի ոչ միայն մարզային, այլ նաև ներհամայնքային ցուցանակների թարմացման աշխատանքները: Հանձնարարեց շարունակել շրջայցերը առկա թերությունները բացահայտելու նպատակով:

6. Պետական և այլ կազմակերպությունների միջոցով իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքի ուսումնասիրությունների վերաբերյալ */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/* :

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչները ամիսը 2 անգամ իրականացնում են մշտադիտարկման աշխատանքներ՝ այլ գերատեսչությունների կողմից մարզում իրականացվող ծրագրերի ընթացքին հետևելու նպատակով: Մշտադիտարկման արդյունքում ի հայտ եկած թերություններն ու բացթողումները տեղում արձանագրվում են, և թերությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ներկայացվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ինչպես նաև պատվիրատու գերատեսչություն:

Մարզպետը հանձնարարեց հետևողական լինել բոլոր աշխատանքների վերահսկման գործում, հետևել բոլոր աշխատանքներին, վեր հանել աշխատանքների հապաղման, թերի կատարման պատճառները և լուծման ուղիներ գտնել:

7. Մարզի համայնքներում 2023թ. ամենամյա չօգտագործված արձակուրդների վերաբերյալ */զեկուցող՝ ՏԿ և ՏԻՀ վարչության գլխավոր մասնագետ Ա. Կարապետյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Ա. Կարապետյանը զեկուցեց, որ յուրաքանչյուր տարի ՏԿԵ նախարարի հանձնարարականի համաձայն մարզպետի աշխատակազմի կողմից ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ համայնքապետարանների աշխատակազմերի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների նախորդ տարիների չօգտագործված ամենամյա արձակուրդները տրամադրելու ուղղությամբ: 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում ամենամյա չօգտագործված արձակուրդների ընդհանուր գումարը կազմել էր 12,172,612 մլն. ՀՀ դրամ:

Մարզպետի աշխատակազմի և համայնքների ղեկավարների կատարած աշխատանքների արդյունքում չօգտագործված արձակուրդային 12,172,612 մլն. ՀՀ դրամից ապրիլի 1-ի դրությամբ մարվել է 9,0 մլն. ՀՀ դրամ: Աշխատանքներն ամբողջությամբ ավարտել են Ալագյազ, Ծաղկահովիտ և Թալին համայնքները: Ապարան համայնքն այս ուղղությամբ մեծ աշխատանքներ է կատարել: Նշված ժամանակահատվածում մարվել է շուրջ 7,0 մլն. ՀՀ դրամ և մնացել է ընդամենը 3,173 մլն. ՀՀ դրամ:

Տեղեկացվեց, որ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ ամենամյա արձակուրդը կամ դրա տեղափոխված մասը սովորաբար տրամադրվում է նույն աշխատանքային տարում, բայց ոչ ուշ, քան 18 ամսվա ընթացքում: ***Առաջարկվեց*** համայնքի ղեկավարներին ձեռնարկել համապատասխան միջոցներ աշխատակազմի աշխատակիցներին և համայնքային

ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներին օրենքով սահմանված ժամկետում ամենամյա արձակուրդները տրամադրելու ուղղությամբ:

8. Տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային ծառայողների 2024թ. կայանալիք վերապատրաստման դասընթացների կազմակերպման վերաբերյալ */զեկուցող՝ ՏԿ և ՏԻՀ վարչության գլխավոր մասնագետ Ա. Կարապետյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքային ծառայողները յուրաքանչյուր երեք տարին մեկ ենթակա են պարտադիր վերապատրաստման: Այս տարի մարզում նախատեսված է կազմակերպել և անցկացնել 1 խումբ՝ 20 համայնքային ծառայողների և 1 խումբ 25 տեղական ինքնակառավարման մարմինների վերապատրաստման դասընթացներ: Վերապատրաստման դասընթացներն անցկացվելու են 2024թ. 2-րդ եռամսյակի ընթացքում՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից: Համայնքների ղեկավարների կողմից վերապատրաստման ենթակա մասնակիցների հայտերը սահմանված կարգով արդեն ներկայացվել են և՛ ՀՀ պետական կառավարման ակադեմիա, և՛ ՏԿԵ նախարարություն:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին գործուն աջակցություն ցուցաբերել վերապատրաստման ենթակա մասնակիցների մասնակցությունը ապահովելու ուղղությամբ:

9. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին */զեկուցող՝ մարզպետի խորհրդական Ա. Գրիգորյան/ :*

/Զեկույցը կցվում է/:

Ա.Գրիգորյանը տեղեկատվություն ներկայացրեց ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների շրջանակում իրականացվող «300 դպրոց 500 մանկապարտեզ» ծրագրով նորոգվող, կառուցվող և վերակառուցվող դպրոցների մասին: Նշվեց, որ այդ ծրագրի շրջանակներում ՀՀ Արագածոտնի մարզում նախատեսված է կառուցվել 24 դպրոց: Վերը նշված դպրոցներից 1-ը ավարտված է, 5-ում աշխատանքները ընթացքի մեջ են, 11-ում մրցույթը կայացել է, 7-ը մրցութային փուլում է:

Մարզպետի կողմից խիստ կարևորվեց դպրոցաշինության ուղղությամբ կատարվող աշխատանքները: Անդրադարձ եղավ Օշականի միջնակարգ դպրոցում նախատեսվող շինարարական աշխատանքներում առկա խնդիրներին:

10. ՀՀ Արագածոտնի մարզում էներգաարդյունավետությանը և էներգետիկ ազատականացմանն ուղղված «Արագածոտն-1» արևային այլընտրանքային ֆոտովոլտային կայանի հիմնման ծրագիր */զեկուցող՝ մարզպետի խորհրդական Ա. Գրիգորյան/:*

Զեկուցվեց Արագածոտնի մարզում էներգաարդյունավետությանը և էներգետիկ ազատականացմանն ուղղված «Արագածոտն-1» արևային այլընտրանքային ֆոտովոլտային կայանի հիմնման ծրագրի իրականացման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն: Հիշեցվեց, որ 2023 թվականի ապրիլի 3-ին Արագածոտնի մարզպետի աշխատակազմում ՀՀ վարչապետի անցկացրած խորհրդակցության ընթացքում մարզպետի կողմից ներկայացված «ԱՐԱԳԱԾՈՏՆ-1» արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագրի գաղափարի և խորհրդակցության արձանագրության 3.3)3.7 կետի կատարումն ապահովելու նպատակով՝ մարզպետի հանձնարարականով ստեղծված աշխատանքային խումբն անկախ փորձագետների հետ միասին կատարել է ծրագրի հետ կապված աշխատանքը և ծրագրի ամբողջական փաթեթը 2024 թ. հունվարի 4-ի դրությամբ ուղարկվել է ՀՀ կառավարություն:

ՀՀ կառավարության կողմից մասնագիտական կառույցների քննարկման արդյունքում այն ետ է ուղարկվել լրամշակման: Մասնագիտական քննարկումների, վերլուծությունների վերջնական արդյունքում ծրագիրը նորից ուղարկվել է ՀՀ կառավարության հաստատմանը: Առաջիկայում ակնկալվող դրական եզրակացության արդյունքում որոշում կընդունվի գումարը փոխանցելու և ծրագիրը իրականացնելու համար: Այս պահի դրությամբ ծրագրի ամբողջական արժեքը կազմում է 402 մլն դրամ: «ԱՐԱԳԱԾՈՏՆ-1» արևային այլընտրանքային ֆոտովոլտային կայանը նպատակ ունի Արագածոտնի մարզպետի աշխատակազմին և մարզպետի աշխատակազմի ենթակայության 118 դպրոցներին, 7 բուժհաստատություններին ապահովել էներգախնայող էլեկտրաէներգիայով՝ արդյունքում հասնելով նշված 126 կազմակերպությունների ֆինանսական միջոցների էական տնտեսմանը, ինչպես նաև էներգետիկ անկախացմանը:

11. Մարզում 2024թ. գարնանային գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի վերաբերյալ */զեկուցող՝ Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Յու. Ազատյան/*:

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ այս պահի դրությամբ Ախուրյանի ջրամբարը լցված է մոտ 375 մլն. մ^3 ջուր, որը նախորդ տարվանից ավել է մոտ 118մլն. մ^3 –ով, Ապարանի ջրամբարում առկա է մոտ 35,61 մլն. մ^3 ջուր, որը նախորդ տարվանից ավել է մոտ 13,3 մլն. մ^3 –ով: Հալավարի ջրամբարում կա 2,738 մլն. մ^3 ջուր, որը նախորդ տարվանից ավել է մոտ 0,78 մլն. մ^3 –ով: Արզնի-Շամիրամ ջրանցքով ոռոգման ջուրը բաց է թողնվել ապրիլի 25-ից, իսկ Ախուրյանի ջրամբարից ոռոգման ջուրը բաց է թողնվել ապրիլի 28-ից:

Բուսաբուծության աջակցության ծրագրով այսօրվա դրությամբ մարզում իրականացվում են գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն մշակաբույսերի և բազմամյա խոտաբույսերի ցանք:

Ծրագրով նախատեսվում է 2024 թվականին փոխհատուցել մինչև 100 հա մակերեսով հացահատիկային (գարնանացան ցորեն, գարնանացան գարի, եգիպտացորեն, վարսակ, հաճար), հատիկաընդեղեն (ոլոռ, լոբի, ոսպ, սիսեռ) մշակաբույսերի և բազմամյա խոտաբույսերի (առվույտ, կորնգան) մշակության մեկ հեկտարի հաշվով կատարվող հիմնական աշխատանքների (վարի, ցանքի, բերքահավաքի) և սերմի արժեքի համար նախատեսված ծախսերի 50 տոկոսը:

Այսօրվա դրությամբ մարզում ցանք է կատարվել գարնանացան գարու /7500հա/, ցորենի /119հա/, վարսակի /724հա/, այլ հացահատիկի/103հա/, կարտոֆիլի /340հա/, բազմամյա խոտի/700 հա/:

Մարզպետ Ս. Մովսիսյանը ևս մեկ անգամ կարևորեց գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական ծրագրերը:

12. Համայնքների կողմից 2025թ.-ի համար՝ սուբվենցիայի ծրագրային հայտերի և տեխնիկական բնութագրերի ներկայացման ընթացքի վերաբերյալ*/զեկուցող՝ զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Գ. Պողոսյան/:*
/Զեկույցը կցվում է/:

Տեղեկացվեց, որ «ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշման համաձայն՝ 2025 թվականի համար համայնքների սոցիալ տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրեր են ներկայացրել ՀՀ Արագածոտնի մարզի 8 համայնքներից 2-ը՝ Աշտարակ և Արևուտ համայնքները: Վերջիններիս ներկայացրել են ընդանուր թվով 3 ծրագրեր: Ըստ մնացած համայնքներից ներկայացված տեղեկատվության՝ իրենց կողմից

դիտարկվում է ինչպես 2024թ-ի սուբվենցիոն ծրագրերից դուրս մնացած հայտերի, այնպես էլ նոր ծրագրային հայտերի ներկայացման հնարավորությունը: 2025թ-ի համար այս պահի դրությամբ ներկայացվել է 3 սուբվենցիոն ծրագրեր, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 1 047 213 210 դրամ, որից համայնքային բյուջեների կողմից համաֆինանսավորումը կազմում է՝ 695 056 087 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորումը համաֆինանսավորումը՝ 352 157 123 դրամ :

Հիշեցվեց նաև, որ ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման Կարգի 4-րդ կետում կատարվել է փոփոխություն, համաձայն որի սուբվենցիայի նախնական հայտերը և տեխ բնութագրերը պետք է ներկայացվեն ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ՝ մինչև ս/թ-ի մայիսի 5-ը, իսկ մարզպետի աշխատակազմի կողմից՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ մինչև մայիսի 10-ը:

Այլ հայտարարություններ և հարցեր չեղան: Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ս. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և օգտվելով առիթից շնորհավորեց Շամիրամ համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին պաշտոնավարման 33 ամյակի կապակցությամբ:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝

Սերգեյ Մովսիսյան